



## Մխիթար Գոշ

### Գիրք Դատաստանի

4

ԳԼՈՒԽ Ը ՅԱՂԱԳՍ ԵՐԴՄԱՆ, ԹԷ ՈՐՊԷՍ ԼԻՅԻ ԵՒ ՈՐՈՅ, ՈՉ  
ՕՐԻՆԱԴՐԵԼՈՎ

Արդ, զմեծ եւ զտէրունական հրամանն եւ զպատուիրանն տեսանենք այժմ կոխան լեալ ի մարդկանէ, քանզի ոչ ունինք հրաման ի Քրիստոսէ երդնուլ: Եւ այժմ յամենայն ոչինչ բանս եւ կարի յաճախապէս երդնուն յանուն Աստուծոյ մարդիկ ի փողոցս, ի շուկայս, ի տունս, ծերք եւ տղայք, քահանայք եւ ժողովուրդք, գիտնականք եւ անգէտք: Եւ եթէ պատահի դատաստան լինել ոմանց, եւ հրամայէ դատաւորն երդնուլ ի վերայ իրաւանց, հակառակին եւ ասեն, եթէ Քրիստոս ասէ՝ ամենեւին մի՛ երդնուլ, եւ այլ շատ պատուիրանացն Քրիստոսի միտ ոչ դնեն ամենեւին: Իսկ եթէ ասիցէ որ՝ անհնարին է երդնուլ, եւ յայտ է, զի Աբրահամու երդուաւ Աստուած, ասելով ի ձեռն հրեշտակին՝ յանձն իմ երդուայ, ասէ Տէր, եւ Աբրահամ ծառային ետ երդումն, եւ դարձեալ՝ երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ: Եւ թագաւորք երդնուն միմեանց, եւ խաղաղութիւն աշխարհի լիցի երդումն սոցա. նոյնպէս եւ՝ իշխանքն: Արդ, եթէ այսոքիկ երդնուն, պարտ է երդնուլ յարդար դատաստանս: Եւ արդ, այսպէս երդնուլ պարտ է. դիցի զձեռն ի վերայ Աւետարանին եւ ասիցէ՝ գիտէ Աստուած, եւ խաչս եւ Աւետարանս վկայ է սրտիս, զի այսպէս է, որպէս ասեմս, եւ ոչ ստեմ: Եւ կամ ասիցէ՝ փառք սոցա եւ զօրութիւն, զի ճշմարիտ է, զոր ասեմս, եւ ոչ ստեմ: Արդ, այսպիսի ասացեալքս խոստովանութիւն է. զԱստուած սրտագէտ գիտել, եւ զխաչն՝ Քրիստոսի նշան, եւ զԱւետարանն՝ Աստուծոյ բան, եւ զեկեղեցին՝

Աստուծոյ տուն: Եւ եթէ հանդիպի որ առաջի դատաւորաց անօրինաց եւ այլցնդ երդումն տացեն քրիստոնէի, եթէ ուրացիր զքո խաչն եւ զԱւետարանն, ամենեւին մի՛ առնուցուն յանձն, թէ եւ մահ հանդիպի: Եւ դատաւորք մի՛ շուտով տայցեն երդումն եւ կամ յաղագս սակաւ ընչից, այլ ջանք դնեն եւ թողուլ տան զկէսն եւ զկիսոյն վճարն եւ եթէ ոչ երդնուն: Եւ երդման կարգն գրեալ է ի կանոնսն, թէ որչափ ապաշխարեացեն: Իսկ եթէ կրօնաւոր իցէ եւ հարկ ունի երդման կամ երէց, բնաւ մի՛ երդնուցուն: Եւ որո՞ց է պարտ երդնուլ: Ամենայն որ, որ ոչ իցէ իւրն վկայ կամ գիր գրեալ վկայիւք, երդումն կայ ի միջի: Ապա թէ որ զոք ըմբոնիցէ ի դատաստան, եւ չիցէ իւր վկայ եւ ոչ այնմ, որ ըմբոնեցան, հարկ է երդնուլ ոչ որ ըմբոնեացն, այլ այնմ, որ ըմբոնեցաւ: Այլ եւ տեսցեն, թէ սուտակ որ իցէ, չտացեն նմա երդումն, այլ՝ ճշմարտախօսին, զի թերեւս վախելով երկնչեսցի յԱստուծոյ եւ ոչ երդնու, եւ դատաստանն կատարի առանց երդման. Եւ թէ ըմբոնեն զոք ի գողութեան կամ ի բոցութեան, եւ ըմբոնողքն չունին վկայ, երդումն է նոցա, որք ըմբոնեցին, զի չարագործաց երդումն ոչ կայ: Ապա եթէ գիտիցեն դատաւորքն եւ կամ այլք ի դատաւորաց կողմանէն եւ կամ այլ ատեանն ատենի վկայեացեն, եթէ սուտ ըմբոնեալ իցեն ի գողութեան կամ ի շնութեան, երդումն լիցի այնպիսի գողոցն: Եւ թէ ոչ է պարտ ամենայն հասակի երդնուլ, այլ քսան եւ հինգ ամաց եւ ի վերայ այնոցիկ է երդումն: Եւ հիւանդաց ոչ է պարտ երդումն տալ եւ կամ երդնուլ, զի մահու կասկած ունին, գուցէ անապաշխար մեռանիցին: Մանկան մի՛ լիցի երդումն վասն խակութեանն: Ապաշխարողաց մի՛ լիցի երդումն, զի մի՛ մեղս ի վերայ մեղաց դիցէ: Մաքսաւորաց եւ արբեցողաց եւ այլոց այսպիսեաց մի՛ լիցի երդումն: Եւ արդ, գրեցաք զայս գիր երդման, այլ ոչ որ դիւրաշարժ լիցի երդնուլ կամ սուտ, զի մի՛ դատապարտութիւն կրեսցէ յԱստուծոյ դատաստանին: Եւ այս սակաւս, զոր գրեցաք, վասն չարութեան ժամանակիս է: Եւ զի անօրէնք բազմացան ի վերայ մեր եւ նոքա դիւրաւ են յերդնուլ, վասն այնորիկ ուսուցաք ձեզ, թէ ո՞րպէս պարտ է երդնուլ, որպէս եւ գրեցաք ի ճառս, եւ մի՛ այլ կերպ, զի մի՛ դատեսցիք յԱստուծոյ:

ԳԼՈՒԽ Թ ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՉ Է ՊԱՐՏ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ  
ՅԱՏԵԱՆ ԵՐԹԱԼ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՆՀԱՒԱՏԻՑՆ Ի ՔՐԻՍՏՈՍ.  
ԲԱԶՈՒՄ ՈՒՆԵԼ ՄԻԶՈՑՍ

Յայտնի է ամենեցուն հեռաորութիւն հաւատացելոցն յանհաւատիցն, յասելն առաքելոյն՝ զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի, կամ՝ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին: Եւ Տէրն ասէ, թէ՛ որ ոչ հաւատայ յՈրդին Աստուծոյ, բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա, եւ եթէ՛ որ ոչ ծնանի ի ջրոյ եւ ի շոգոյ, ոչ տեսանէ զարքայութիւն Աստուծոյ: Եւ Յովհաննէս առաքեալն ասէ՛ որ ոչ խոստովանի զՈրդին Աստուծոյ մարմնով եկեալ յաշխարհ, նա իսկ է նեոն: Եւ ամենայն մարգարէքն ուրացողք ասեն զհեռացեալսն յողիղ ճանապարհէն: Ջի թէպէտ եւ այժմ նահմետականք զԱստուած խոստովանին Հայր, այլ զՈրդի եւ զՀոգի ուրանան, եւ այս մեծ ուրացութիւն է: Եւ արդ, եթէ յաստուածպաշտութեանն մեզ ընկերակիցք չեն, ոչ է պարտ առ նոսա ի դատաստան երթալ, զի զհին ասելին նոր սիրելի դժուար է առնել, գոր եւ գրէ առաքեալն Կորնթացոցն, ասելով. ոչ որ է ի ձէնջ այնքան իմաստուն, որ կարիցէ իրաւունս ընտրեալ ի մէջ երբօր իւրոյ, այլ եղբայր ընդ երբօր դատի եւ զայն՝ ի մէջ անհաւատից, եւ եթէ՛ զանարգս եկեղեցոյ դատաւոր նստուցանէք: Ջի նոքա ըստ կրօնից իրեանց առնեն դատաստան, զի զինչ իրեանց գործքն է եւ հաւատն, նոյն եւ դատաստանն: Թէպէտ եւ սկիզբն յօրինաց անտի Մովսիսի ունին, բազում ինչ այլայլեն եւ ըստ չար մտաց իրեանց առնեն: Սուտ վկայիւք վարին, եւ կեղծաւոր ատենիւ, եւ գրպարտ ճարտարօք, եւ անգեղջ երդմամբ: Չմեռեալս գրկեն եւ զինչսն առնուն, թէ որբոց կու պահենք, մեռեալք ի՞նչ առնեն: Եւ այս այնոր նշան է, որ ոչ հաւատան, թէ բարի կամի առնել Աստուած մեռելոց, հայնց եւ նոքա ոչ տան մասն իրեանց մեռելեացն: Եւ գորքս եւ զայրիս, որք անժառանգ են, բնաւին գրկեն, թէ առնումք զիրքս եւ զգանձս պահենք, եւ երբ մեծանան որբերն՝ տամք, եւ յետոյ սուտ գտանին ի խօսս իրեանց: Չկանայս ի վարձու ունին, եւ երբ գնտաւ ածեն զչար գործս իրեանց, տան զվարձս զինչ գտան մի եւ թողուն եւ գորդիսն այլոց թողուն: Անսահման եւ անխնայ գործեն զամենայն չարիս, գոր պատահի նոցա: Եւ զլուացումն մարմնոյ սրբութիւն հոգոյ համարին, զհեշտութիւն մարմնոյ պատուեն է յոչինչ չարեաց յետ չգան: Չարքայութիւն Աստուծոյ կանամք ասեն առնուլ եւ զդրախտն՝ պոռնկանոց: Աստուծոյ սիրելի ասեն գնոլորեցուցիչ առաջնորդն իրեանց, զայն որ զարուագիտութիւն եւ զանասնապղծութիւն քարոզեաց: ՉԱստուած ասեն պաշտենք եւ զբան նորա ուրանան: Յարութիւն խոստովանին եւ հոգոյ բաժին ոչ տան: Հատուցումն ասեն գործոց եւ զամենայն մեղս գործեն եւ միայն զգերեզմանս դեղագործեն: Չզինի հարամ ասեն եւ ամենքին արբենան, եւ զի մի՛ երկայնեցից զչարին նոցա: Եւ արդ, եթէ այսպիսի

օտարութիւն է ընդ մեզ եւ ընդ նոսա հաւատոց եւ գործոց, զի՞ ի դատաստան  
նոցա լիցի ըղորդութիւն մերոց օրինօք: Եւ թէպէտ ըստ օրինացն բազում ինչ է  
նոցա, եւ հաւատամք օրինացն Աստուծոյ եւ ոչ նոցա: Իսկ ուղիղ հաւատացելոցս  
ի Քրիստոս ոչ է պարտ դատաստանաւ նոցա վարիլ, քանզի մեք խոստովանիմք  
զԵրրորդութիւն սուրբ միով աստուածութեամբ եւ զօրութեամբ, որում փառք  
յաւիտեանս ամէն:

**ԳԼՈՒԽ Ժ ՅԱՂԱԳՍ ԹԷ ՅՈՐՐՈՅ ԳՐՈՅ ՀԱՒԱՔԵՄՔ ԵՒ ԳՐԵՄՔ  
ՉԳԻՐՍ ԴԱՏԱՍՏԱՆԻՍ, ԵՒ ԿԱՄ ՅՈՐ ԱՉԳԱՅ ՀԱՒԱՔԵՑԱԻ:  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍԱԿԱԻՈՒՔ**

Հաւաքեցաք յառաջ յօրինացն Աստուծոյ, որ ետ Մովսիսի. առաջին՝ յԵլից,  
յԵրկրորդ օրինացն եւ յայլոց գլխոցն, երկրորդ՝ ի կանոնաց սուրբ հարցն եւ  
յԱւետարանէն, երրորդ՝ յամենայն սուրբ տառից ի հնոց եւ ի նորոց: Եւ արդ,  
թէպէտ եւ համարձակեցաք մեք եւ գրեցաք զգիրս, սակայն եթէ հանդիպի ոք  
ինաստուն եւ թիրութիւն գտցէ ի սմա, աղաչեմ, զի լցցէ զպակասն, քանզի  
ամենայն գիրք ոչ եթէ ի միում ժամանակի գրեալ են, այլ յայլ եւ այլ ժամանակս:  
Չնոյն եւ այս սկիզբն եղեւ ինաստնոց՝ յաղագս զմեզ յիշելոյ ի բարիս: